ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » փետրվարի 2025 թվականի N: 39 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից թվով չորս դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացիներին հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2025 թվականի <<14>>փետրվարի-ի N 39-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Անահիտ Կարապետյան	Քաղաք Գյումրի, Երկաթ գծի քոլեջ հանրակացարան, սենյակ 2/27	30000 /երեսուն հազար/ դրամ
2	Նարինե Ղազարյան	Քաղաք Գյումրի, Մովսես Խորենացի փողոց, շենք 32, բնակարան 25	30000 /երեսուն հազար/ դրամ
3	Լիանա Ավետիսյան	Քաղաք Գյումրի, Մովսես Խորենացի փողոց, շենք 8, բնակարան 38	40000 /քառասուն հազար/ դրամ
4	Ֆիլիզ Մահորյան	Քաղաք Արթիկ, Տոնականյան փողոց, 2-րդ նրբանցք, տուն 23	100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
	Ընդամենը		200000 /երկու հարյուր հազար/ դրամ